ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի (ծածկագիրը 3.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
12.07.2018

2-րդ կարգի մասնագետը (3.3-1)՝.
- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները:
- Կատարում է Աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները ժամանակին և պատշաճ որակով
-Ապահովում է Աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը
- Հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին
- Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը՝ անհրաժեշտության դեպքում՝ իր լիազորությունների սահմաններում
-Իրականացնում է Աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության հերթագրումը
- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման փաստաթղթերը
- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին
- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է՝

- միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային փորձի
-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- Սույն պաշտոնի անձնագրի 10 կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018 թվականի օգոստոսի 14-ին Ժամը 12:00-ին Լենուղու համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք Լենուղու համայնքապետարան (հասցե՝ գյուղ Լենուղի, հեռ. 0237-6-91-98) կամ Արմավիրի մարզպետարան (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.
- մեկ լուսանկար 3X4 սմ չափի
- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Լենուղու համայնքապետարան (հասցե՝ գ. Լենուղի, հեռ.0237-6-91-98) և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի հուլիսի 30-ը: